# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

# 2019

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Մաղթում ենք հաջողություն:**

1 **Նկարում մթնոլորտի ո՞ր շերտն է նշված Գ տառով.**

1) վերնոլորտը
2) արտաքին ոլորտը
3) ջերմոլորտը
4) ներքնոլորտը




2 **Ո՞րն է ամենափոքր մասշտաբը.**

1) 1 : 42 000
2) 1 : 420 000
3) 1 : 4 200 000
4) 1 : 4 200

3 **Նկարում Դ կետի ազիմուտը հավասար է.**

1) 135°
2) 45°
3) 315°
4) 225°



4 **Հարավային բևեռային շրջագծի վրա բևեռային գիշեր լինում է.**

1) հունիսի 22–ին
2) սեպտեմբերի 23–ին
3) դեկտեմբերի 22–ին
4) մարտի 21–ին

5 **Ո՞ր պնդումն է սխալ.**

1) Քամու միջոցով ստացվում է էլեկտրական էներգիա:
2) Քամիներն առաջացնում են ծովային հոսանքներ:
3) Քամիներն առաջացնում են ցունամիներ:
4) Քամիներն առաջացնում են ավազաբլուրներ:

6 **Ըստ բարձրության օդի ջերմաստիճանը նվազում է, որովհետև.**

1) մոտենում ենք օզոնի շերտին
2) օդը տաքանում է Երկրի մակերևույթից
3) մեծանում է օդի խտությունը
4) մոտենում ենք սառցադաշտերին

7 **Գիշերվա և ցերեկվա, տարվա եղանակների, մակընթացության, տեղատվության հերթափոխը, գեյզերների պարբերական ժայթքումը բնութագրում են աշխարհագրական թաղանթի.**

1) երևույթների ռիթմիկությունը
2) կլիմայի չոր, խիստ ցամաքայնությունը
3) գոտիականությունը և զոնայականությունը
4) միասնականությունը

8 **Որքա՞ն է Արեգակի ճառագայթների անկման անկյան տարբերությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիսային (հս.լ. 42°10′) և հարավային (հս.լ. 37°20′) ծայրակետերի միջև.**

1) 4° 50′
2) 15°
3) 5° 40′
4) 9° 30′

9 **Նկարում տրված քարտեզը կազմելու համար ի՞նչ պրոյեկցիա է կիրառվել:**

1) գլանային
2) ազիմուտային
3) կոնային
4) հասարակածային



10 **Ըստ նկարի՝ ի՞նչ եղանակ է հյուսիսային կիսագնդում.**

1) ամառ
2) աշուն
3) ձմեռ
4) գարուն




11 **«Լիճ - սնվող գետ» զույգերից ո՞րն է ճիշտ.**

1) Տանգանիկա — Սպիտակ Նեղոս
2) Թանա — Կապույտ Նեղոս
3) Վիկտորիա — Զամբեզի
4) Նյասա — Կոնգո

12 **Ի՞նչը բնորոշ չէ արկտիկական (անտարկտիկական) օդային զանգվածներին.**

1) բնորոշվում են ցածր ջերմաստիճանով
2) բնորոշվում են փոքր խոնավությամբ և մեծ թափանցիկությամբ
3) բաժանվում են տաք և ցուրտ տարատեսակների
4) ձևավորվում են Արկտիկայի, Անտարկտիդայի և հարակից կղզիների վրա

13 **Բնութագրումով որոշել թերակղզին.**

*Այս թերակղզին Եվրասիայի հարավային մասում է: Աչքի է ընկնում սավաննային հարուստ բուսականությամբ ու կենդանական աշխարհով: Արևմուտքից ափերը ողողում է Անդամանյան ծովը, իսկ արևելքից՝ Հարավչինական ծովը: Ո՞ր թերակղզին է.*

1) Հինդուստան
2) Հնդկաչին
3) Կորեական
4) Արաբական

14 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Պասսատները մշտապես փչում են նույն ուղղությամբ:
2) Լեռնահովտային քամիներն առաջանում են մայրցամաքների և օվկիանոս-ների միջև:
3) Պասսատները հասարակածից դեպի արևադարձեր փչող քամիներն են:
4) Գիշերային բրիզը փչում է ջրից դեպի ցամաք և առաջացնում է զովություն:

15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Որքան փոքր է Արեգակի ճառագայթների անկման անկյունը, այնքան Երկրի մակերևույթը քիչ ջերմություն է ստանում:
2) Մթնոլորտային բարձր ճնշման գոտիներում առատ տեղումներ են թափվում:
3) Արեգակից ստացվող ջերմությունը Երկրի վրա բաշխված է հավասարաչափ:
4) Արևադարձային լայնություններում հաստատվում է ցածր ճնշում:

16 **Ո՞ր ծովերն են միմյանց միացած նեղուցով.**

1) Հյուսիսային և Նորվեգական
2) Ադրիատիկ և Եգեյան
3) Կարիբյան և Բաֆինի
4) Ճապոնական և Արևելաչինական

17 **Գործող հրաբուխներ են.**

1) Կիլիմանջարոն և Վինսոնը
2) Ջոմոլունգման և Մոնբլանը
3) Կամերունը և Էտնան
4) Էլբրուսը և Կազբեկը

18 **Ի՞նչն է պատճառը, որ Յանցզի գետը ձմռանը խիստ ծանծաղում է.**

1) Բնակչությունը ոռոգման համար շատ ջուր է օգտագործում:
2) Ձմռանը գետի ավազանում շատ քիչ տեղումներ են թափվում:
3) Ձմռանը ուժեղ քամիների հետևանքով մեծանում է գոլորշացումը:
4) Այն սնող ստորերկրյա աղբյուրները սառչում են:

19 **Քարտեզում Դ տառով ո՞ր օվկիանոսային հոսանքն է նշված.**

1) Օյասիո
2) Մուսսոնային
3) Հյուսիսատլանտյան
4) Կուրոսիո




20 **Քարտեզում Զ տառով ո՞ր գետն է նշված.**

1) Օբ
2) Լենա
3) Անգարա
4) Կոլիմա

**21** **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Գիշերահավասարի ժամանակ՝ կեսօրին, Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ հարավային արևադարձի վրա 90° է:
2) Տարվա ընթացքում հասարակածի վրա կեսօրին Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ միշտ 90° է:
3) Հունիսի 22–ին Արեգակի դիրքը հորիզոնի նկատմամբ ամենաբարձրն է հյուսիսային բևեռային շրջագծի վրա:
4) Հս. լ. 25° 30′–ի վրա տարվա ընթացքում կեսօրին Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ միշտ ցածր է 90°–ից:

**22** **Հյուսիսային Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ.***

1) Ատլանտյան օվկիանոսի Լաբրադորյան և Խաղաղ օվկիանոսի Կալիֆոռնիական սառը ծովային հոսանքները առափնյա շրջաններում առաջացնում են կլիմայի չորություն և օդի ջերմաստիճանի անկում:
2) Տաք և սառը օդային զանգվածների հանդիպման շրջաններում հաճախակի առաջանում են հզոր պտտահողմեր, որոնց այստեղ կոչում են տոռնադո:
3) Մայրցամաքում ամենաշատ տեղումները դիտվում են Մեծ ավազան սարահարթի գոգավորություններում:
4) Արևմտյան քամիները մայրցամաք են ներթափանցում Խաղաղ օվկիանոսից, սակայն հանդիպելով Կորդիլիերների արևմտյան լանջերին՝ իրենց խոնավության մեծ մասը թափում են այնտեղ:

**23** **Երևանի հեռավորությունը հյուսիսային բևեռային շրջագծից կլինի.**

1) 2941,5 կմ
2) 3052,5 կմ
3) 3163,5 կմ
4) 2830,5 կմ

**24** **Իտալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ.***

1) Արևմտյան ափերը ողողում են Տիրենյան ծովի ջրերը:
2) Հյուսիսում տարածվում է Պադանի դաշտավայրը:
3) Կլիման մերձարևադարձային միջերկրածովային է:
4) Հարուստ է նավթի և բնական գազի պաշարներով:

25 **Դիագրամում տրված է բնակչության սեռային կազմը (մլն մարդ): Ո՞ր տարածաշրջանին է համապատասխանում 2 թիվը.**




1) Օվկիանիային
2) Եվրոպային
3) Հյուսիսային Ամերիկային
4) Ասիային

26 **Ժողովրդագրական անցման չորրորդ փուլին բնորոշ է բնական աճի կայունացումը: Այս փուլը համընկնում է.**

1) «ժողովրդագրական պայթյունին»
2) երկրների զարգացման արդյունաբերական փուլին
3) երկրների զարգացման հետարդյունաբերական փուլին
4) մինչկապիտալիստական ժամանակաշրջանին

27 **Այս կամ այն տարածքում բնակավայրերի տեղաբաշխումը չի լինում.**

1) գծային
2) համակենտրոնացված
3) շրջանաձև
4) համաչափ

28 **Բնութագրումով որոշել պետությունը.**

*Կղզեխմբային պետություն է: Աշխարհում ամենամեծն է մահմեդականություն դավանողների թվով: Ո՞ր պետությունն է.*

1) Ինդոնեզիան
2) Սաուդյան Արաբիան
3) Ֆիլիպինները
4) Ճապոնիան

29 **2010 թ. ՀՀ բնակչության թիվը կազմել է 3,263 մլն մարդ: Ժամանել է 900 մարդ, մեկնել՝ 3300 մարդ: Միգրացիայի ինտենսիվությունը հավասար կլինի մոտ.**

1) 0,1 %
2) 0,07 %
3) 0,63 %
4) 0,13 %

30 **Զարգացած երկրների մեջ առանձին ենթախումբ են կազմում արևմտաեվրոպական հին արդյունաբերական երկրները: Դրանցից չեն.**

1) Դանիան և Նիդերլանդները
2) Իսպանիան և Պորտուգալիան
3) Շվեյցարիան և Նորվեգիան
4) Ավստրիան և Բելգիան

31 **Դեպի Սև ծով ելք չունի.**

1) Ռումինիան
2) Բուլղարիան
3) Հունգարիան
4) Վրաստանը

32 **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Գերմանիայում մեքենաշինությունը տնտեսության մասնագիտացման ճյուղ է:
2) Հրաբխային շրջաններում կառուցվում են երկրաջերմային էլեկտրակայաններ:
3) Համաշխարհային բեռնափոխադրումներում ամենամեծ բաժինն ունի երկաթուղային տրանսպորտը:
4) Քիմիական արդյունաբերությունն ունի անսպառ հումքային բազա:

33 **«Պետություն — բնական ռեսուրսի հարուստ պաշար» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Ֆինլանդիա — բնական գազ
2) Նորվեգիա — նավթ
3) Շվեդիա — երկրաջերմային էներգիա
4) Իսլանդիա — քարածուխ

**34** **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Թեթև գունավոր մետաղների ձուլումն էներգատար արտադրություն է:
2) Ծանր գունավոր մետաղների ձուլման ձեռնարկությունները հիմնականում տեղաբաշխված են գիտական կենտրոնների մոտ:
3) Սև մետաղաձուլական ձեռնարկությունները տեղաբաշխվում են սպառման շրջանների մոտ:
4) Մետաղաձուլական ձեռնարկությունները բնապահպանական տեսակետից անվտանգ են:

**35** **Ձիթատու տեխնիկական մշակաբույսեր են.**

1) կարտոֆիլը և ձիթապտուղը
2) սոյան և արևածաղիկը
3) եգիպտացորենը և բրինձը
4) բամբակենին և ցորենը

**36** **Ո՞ր պնդումն է *սխալ*.**

1) Բեռնատար տրանսպորտի աշխատանքը բնութագրող ցուցանիշ է բեռնաշրջանառությունը:
2) Օդային տրանսպորտը հիմնականում իրականացնում է բեռնափոխադրումներ:
3) Ցամաքային տրանսպորտը ներառում է երկաթուղային, ավտոմոբիլային, խողովակաշարային տեսակները:
4) Աշխարհի առևտրային նավատորմի առաջատարներ են Լիբերիան, Պանաման, Ճապոնիան և Հունաստանը:

**37** **Արդյունաբերության ճյուղերից որի՞ տեղաբաշխման գործում է մեծ կոռպերացման դերը.**

1) մեքենաշինության
2) քիմիական արդյունաբերության
3) սննդի արդյունաբերության
4) մետաղաձուլության

38 **Ո՞ր երկու պետությունները չեն սահմանակցում Գերմանիային.**

1) Լեհաստանը և Ավստրիան
2) Իտալիան և Հունգարիան
3) Շվեյցարիան և Չեխիան
4) Բելգիան և Դանիան

39 **«Նավահանգիստ — ծով» զույգերից ընտրել *սխալը.***

1) Սանկտ Պետերբուրգ — Բալթիկ
2) Ստամբուլ — Մարմարա
3) Վլադիվոստոկ — Օխոտի
4) Մարսել — Միջերկրական

40 **Բնութագրումով որոշել պետությունը.**

*Աշխարհի հնագույն պետություններից է, արևելյան քաղաքակրթության օրրանը: Երկրի ազգային փոքրամասնություններից են մոնղոլները, ույղուրները, մանջուրները, տիբեթցիները: Քաղաքային բնակիչների բացարձակ թվով այս պետությունն աշխարհում գրավում է առաջին տեղը: Երկրի ներկայիս զարգացման գործում մեծ դեր է խաղացել ազատ տնտեսական գոտիների ստեղծումը: Ո՞րն է այդ պետությունը.*

1) Ինդոնեզիան
2) Չինաստանը
3) Հնդկաստանը
4) Ճապոնիան

41 **Արևելյան Եվրոպա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.**

1) Ռուսաստանում և Ուկրաինայում զարգացած է սև մետաղաձուլությունը:
2) Տարածաշրջանի բերրի հողերը և ագրոկլիմայական պայմանները նպաստավոր են գյուղատնտեսության զարգացման համար:
3) Անասնապահության առաջատար ճյուղը ոչխարաբուծությունն է:
4) Էլեկտրաէներգետիկայի գերակշիռ մասն արտադրվում է ջերմաէլեկտրակա-յաններում:

42 **Պարսիկներից հետո Իրանի խոշոր ազգություններն են.**

1) աֆղանները և վրացիները
2) ադրբեջանցիները և քրդերը
3) աջարները և արաբները
4) թուրքերը և հայերը

43 **Ո՞ր շարքի լեռնագագաթներն ունեն 3500–4000 մ բարձրություն.**

1) Ջիլո, Սավալան, Սիփան
2) Քաջքար, Փոքր Մասիս, Աժդահակ
3) Սիփան, Սրմանց, Նեմրութ
4) Արսիան, Սուկավետ, Նեմրութ

44 **«Գետ — հոսքի ավազան» զույգերից ընտրել ճիշտը.**

1) Եփրատ — Պարսից ծոց
2) Տիգրիս — Կարմիր ծով
3) Արաքս — Սև ծով
4) Ճորոխ — Կասպից ծով

45 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Միջնաշխարհում ձմեռը կարճատև է և սակավաձյուն:
2) Կարսի և Աշոցքի սարահարթերում օդի ջերմաստիճանը – 30°C–ից ցածր չի իջնում:
3) Հայկական լեռնաշխարհում արևմուտքից արևելք և հյուսիսից հարավ տեղումների քանակն ավելանում է:
4) Հայկական լեռնաշխարհում կլիմայական տարբերություններ առաջացնող ամենակարևոր գործոնը լեռնային բարդ ռելիեֆն է:

46 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Արարատյան դաշտում առավելապես տարածված են լեռնաշագանակագույն հողերը:
2) Կոտայքի և Ապարանի սարահարթերում տարածվում են աղուտ–ալկալի հողերը:
3) ՀՀ անտառային գոտու ցածրադիր տեղամասերում տիրապետում են լեռնային սևահողերը:
4) Շիրակի և Լոռվա դաշտերում տարածվում են լեռնային սևահողերը:

**47** **Ընտրել «մարզ – էլեկտրական» համապատասխանությունների ճիշտ շարքը.**

| | |
|---|---|
| 1. Կոտայք | ա. Հայկական ատոմակայան |
| 2. Արմավիր | բ. Շամբի |
| 3. Լոռի | գ. Գյումուշի դ. |
| 4. Սյունիք | դ. Զորագետի |

1) 1–դ, 2–ա, 3–բ, 4–գ
2) 1–ա, 2–բ, 3–գ, 4–դ
3) 1–գ, 2–ա, 3–դ, 4–բ
4) 1–բ, 2–դ, 3–ա, 4–գ

**48** **Ո՞ր շարքում տրված արդյունաբերության բոլոր ճյուղերն են Սյունիքի մարզի համար առաջատար.**

1) հանքային ջրերի արտադրությունը, քիմիական արդյունաբերությունը
2) սև մետաղաձուլությունը, անտառային արդյունաբերությունը
3) քիմիական արդյունաբերությունը, շինանյութերի արդյունաբերությունը
4) գունավոր մետաղաձուլությունը, էլեկտրաէներգետիկան

**49** **Վայոց ձորի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Մարզի տարածքում հայտնաբերվել են երկաթաքարի հարուստ հանքավայրեր:
2) Տարածքի բացարձակ բարձրությունների տարբերությունը փոքր է:
3) Արևելքից սահմանակից է Արարատի մարզին:
4) Սյունիքի մարզի հետ կապված է Որոտանի լեռնանցքով:

50 **Ո՞ր լեռնագագաթն է քարտեզում նշված Գ տառով.**

1) Քաշաթաղ
2) Կարկտասար
3) Մուրղուզ
4) Չաթինլեռ

51 **Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված Է տառով.**

1) Մարտունի
2) Սևան
3) Գավառ
4) Ճամբարակ

52 **Երևանի օդային ավազանը գերազանցապես աղտոտում է (են).**

1) գունավոր մետաղաձուլությունը
2) ավտոմոբիլային տրանսպորտը
3) ջերմաէլեկտրակայանները
4) քիմիական արդյունաբերությունը

53 **Տրված զույգերից որի՞ երկրներն են առավել հարուստ ջրաէներգետիկ ռեսուրսներով.**

1) Իսպանիա և Իտալիա
2) Գերմանիա և Ֆրանսիա
3) Նորվեգիա և Շվեդիա
4) Չեխիա և Լեհաստան

54 **Բնական ռեսուրս — վերականգնման հնարավորություն» զույգերից ընտրել ճիշտը.**

1) կլիմայական ռեսուրս — սպառվող–վերականգնվող
2) երկրաջերմային ռեսուրս — անսպառ
3) հանքային ռեսուրս — սպառվող–վերականգնվող
4) կենսաբանական ռեսուրս — անսպառ

55 **Բնական և մարդածին այն օբյեկտները, որոնք ունեն եզակիություն, պատմական կամ գեղարվեստական արժեք, գեղագիտական գրավչություն, առողջարարական-կազդուրիչ նշանակություն և կարող են օգտագործվել հանգստի ու զբոսաշրջության կազմակերպման համար, կոչվում են.**

1) ագրոարդյունաբերական համալիրներ
2) ռեկրեացիոն ռեսուրսներ
3) սպառվող–վերականգնվող ռեսուրսներ
4) գյուղատնտեսական հողահանդակներ

56 **Գրել այն հրաբուխների համարները, որոնք խաղաղօվկիանոսյան գեոսինկլինալի սահմաններում են.**

1) Էտնա
2) Կոտոպախի
3) Վեզուվ
4) Հեկլա
5) Կամերուն
6) Կլյուչևսկայա սոպկա
7) Օրիսաբա
8) Դեմավենդ

57 **Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Հնդկական օվկիանոս.**

1) Օրանժ
2) Նիգեր
3) Սիրդարյա
4) Մուրեյ
5) Ինդոս
6) Մեկոնգ
7) Զամբեզի
8) Տիգրիս

58 **Գրել այն ապարների համարները, որոնք ունեն փոխակերպային ծագում.**

1) գնեյս
2) գրանիտ
3) խճաքար
4) կերակրի աղ
5) կվարց
6) մարմար
7) կավիճ
8) տուֆ

59 **Գրել այն երկրների համարները, որոնք թերակղզային են.**

1) Ֆրանսիա
2) Իտալիա
3) Սաուդյան Արաբիա
4) Արգենտինա
5) Ճապոնիա
6) Նիգերիա
7) Բելգիա
8) Կոլումբիա

60 **Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են բամբակի արտադրությամբ.**

1) Պակիստան
2) Ֆրանսիա
3) Գերմանիա
4) Կանադա
5) Ռուսաստան
6) Իրան
7) Վրաստան
8) Չինաստան

61 **Գրել այն բնակավայրերի համարները, որոնք Գեղարքունիքի մարզում չեն.**

1) Վարդենիս
2) Սոթք
3) Բյուրեղավան
4) Ճամբարակ
5) Սևան
6) Հրազդան
7) Մարտունի
8) Դիլիջան

62 **Տրված պետությունները դասավորել բրնձի համախառն բերքի աճման կարգով.**

1) Հնդկաստան
2) Բանգլադեշ
3) Չինաստան
4) Ինդոնեզիա

63 **Հայկական լեռնաշխարհի տրված լեռնաշղթաների համարները դասավորել ըստ դրանցից սկիզբ առնող գետերի ակունքների՝ Արածանի, Արևմտյան Եփրատ, Արաքս.**

1) Ծաղկավետ 2) Բյուրակն 3) Ծաղկանց

(64-65). Երկրի բնակչության թիվը 18 մլն է, քաղաքային բնակչության թիվը՝ 13,5 մլն, մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը՝ 450 000.

| 64 | Որոշել ծնելիության գործակիցը (‰): |
|---|---|

| 65 | Որոշել ուրբանիզացման մակարդակը: |
|---|---|

(66-67). Քաղաքում օրվա ընթացքում չափել են օդի ջերմաստիճանը և ստացել են –1˚, –4 ˚, –6 ˚, –2 ˚, +7 ˚, +16˚, +10˚, +4˚ ցուցանիշները.

66 Որոշել օդի օրական միջին ջերմաստիճանը:

67 Որոշել ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը (ամպլիտուդ):

68 Երկրում բրնձի համախառն բերքը կազմում է 840 000 ց, իսկ զբաղեցրած ցանքատարածությունների մակերեսը՝ 24000 հա: Որքա՞ն է բրնձի միջին բերքատվությունը:

69 **Բնական զոնաների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Շյուղախոտը, փետրախոտը և երեքնուկը բնորոշ են տափաստանների բնական զոնային:
2) Աֆրիկայում բացակայում է տափաստանների բնական զոնան:
3) Սևահողերը մեծ տարածում ունեն Ավստրալիայում:
4) Աշխարհագրական գոտին բնական զոնայի մի մասն է:
5) Բնական զոնաների հերթափոխը լեռներում կոչվում է վերընթաց գոտիականություն:
6) Բառաբը և շշածառը տարածված են հասարակածային մշտադալար, խոնավ անտառների բնական զոնայում:

70 **Աշխարհի բնակչության ազգային կազմի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

1) Ազգն ունի ազգությանը բնորոշ հատկանիշներ, սակայն սոցիալ-տնտեսական զարգացման ավելի ցածր աստիճանի վրա է, քան ազգությունը:
2) Այն երևույթը, երբ ամրապնդվում է ազգի լեզվական և մշակութային ընդհանրությունը, երբ ազգը դառնում է ավելի միասնական ու ամրակուռ, կոչվում է ազգերի միաձուլում:
3) Աշխարհում խոշորագույն լեզվաընտանիքը հնդեվրոպականն է:
4) Բնակչության ազգային և կրոնական կազմերի սահմանները մշտապես համընկնում են:
5) Բնակչության ազգային և լեզվական կազմերը աշխարհի առանձին տարածաշրջաններում չեն համընկնում:
6) Ազգի հատկանիշներից են լեզվի, հոգևոր մշակույթի և հոգեբանական խառնվածքի ընդհանրությունը: